ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Թեմա՝ Ուսուցողական գրավոր աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները և տեսակները

Կազմեց՝ Զարիկ Խաչատրյան

Դպրոց՝ Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

«Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԿԱՊԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
ԳԼՈՒԽ 1
ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ
1.1 Գրավոր խոսքի տեսակները և դրանց ուսուցման մեթոդները.....5
1.2 Թելադրություն գրելու առանձնահատկություններ.....7
ԳԼՈՒԽ 2
ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2.1 Շարադրություն.տեսակները և անցկացումը.....11
2.2 Շարադրություններ գրելու հիմնական առանձնահատկություններ.....13
Եզրակացություն.....17
Օգտագործված գրականության ցանկ.....19
Հավելվածներ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Կապակցված խոսքի զարգացման և շտկման գործընթացը հասակակիցների հետ համատեղ գործունեության պայմաններում ոչ միայն կնպաստի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև երեխաներին զերծ կպահի համաշխարհային տեղեկատվական հսկայածավալ հոսքի արդյունքում հայոց լեզվի կրած վնասներից:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սովորողների գրավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները, մեթոդական հիմքերը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, հիմնավորել դրանց իրականացման մանկավարժական պայմանները:

Այդ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել դպրոցականի գրավոր խոսքի դրսևորումները, զարգացման աստիճանը, հաղորդակցման դժվարությունները:
2. Բացահայտել հայոց լեզվի ուսուցման ընթացքում գրավոր խոսքի զարգացման բովանդակությունը, որոշել սովորողների կապակցված խոսքի զարգացման մակարդակները:
3. Մշակել համալիր պարապմունքներ՝ ուղղված սովորողների գրավոր խոսքի զարգացմանը:
4. Փորձարարությամբ ստուգել համատեղ գործունեության ընթացքում խոսքի զարգացման մանկավարժական պայմանների արդյունավետությունը:

Հետազոտության առարկան գրավոր խոսքի զարգացումն է հայոց լեզվի ուսուցման շարունակական համակարգում:

Հետազոտության օբյեկտը դպրոցում սովորողների խոսքի զարգացման մանկավարժական միջավայրն է:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել սովորողի գրավոր խոսքի զարգացմանն ուղղված գիտամանկավարժական և մեթոդական գրականությունը: Աշխատանքի տեսական մասը շարադրելիս օգտվել ենք նաև տարբեր մեթոդական ուղեցույցներից:

Հետազոտության մեթոդները: Հետազոտություն իրականացնելիս օգտվել ենք փորձարարական մեթոդներից՝ զրույց, հարցազրույց, անկետավորում, մանկավարժական փորձարարություն, գրավոր խոսքի ախտորոշման թեստային մեթոդիկայից, կապակցված խոսքի զարգացման մակարդակը բացահայտող մեթոդիկայից, ստեղծագործական խնդիրների լուծման տեսություն տեխնոլոգիայից:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1.1 Գրավոր խոսքի տեսակները և դրանց ուսուցման մեթոդները

Գրավոր խոսքի ուսուցման ոլորտում կրտսեր դպրոցի աշակերտների առջև դրվում են բավականին բարդ խնդիրներ: Աշակերտի՝ գրավոր խոսքը կառուցելու կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով օգտագործվում են գրավորի չորս հիմնական տեսակներ՝ արտագրություն, թելադրություն, փոխադրություն և շարադրություն[1]:

Արտագրութուն: Բոլոր դասարաններում օգտագործվում են արտագրություններն՝ իրենց տարատեսակներով՝ ընդօրինակման և ստեղծագործական: Ընդունված են արտագրություններ ինչպես դասագրքից և գրատախտակից, այնպես էլ ձեռագիր տեքստից:

Սովորաբար արտագրելու ուղղությամբ հանձնարարություններ տրվում են առաջին դասարանի գրաճանաչության շրջանից: Արտագրելու առաջադրանքը կրտսեր դպրոցականի համար բավականին բարդ հանձնարարություն է, այն կատարելու համար աշակերտը պետք է իրականացնի մի քանի մտավոր գործողութուն՝ կարդա բնագիրը, այն հասկանա, իմաստավորի, արտագրի՝ պահպանելով ինչպես ուղղագրական այնպես էլ վայելչագրական կանոնները: Արտագրությունը մեխանիկական աշխատանք չէ, ինչպես հաճախ կարծում են ոմանք: Արտագրութունները լինում են՝ ընդօրինակման և ստեղծագործական[2]:

Ընդօրինակման արտագրության համար ընտրվում են ինչպես գրությամբ և արտասանությամբ համապատասխանող բառեր, այնպես էլ բառակապակցություններ, պարզ ընդարձակ նախադասություններ, չափածո տողեր և այլ նյութեր, որոնց ծավալը դասարանից դասարան շատանում է: Այդ նյութերի մեջ պիտի տեղ տրվի երկհնչյուն, եռահնչյուն, **օ**-ի, **ը**-ի ուղղագրությանը: Չպետք է մոռանալ, որ երեխաները կդժվարանան դրանց ճիշտ գրության մեջ: Ընդօրինակման աշխատանքներն իրականացնելիս տրված նյութն աշակերտները պիտի բարձրաձայն կարդան, պարզաբանեն անհրաժեշտ բառերի ուղղագրությունը և կետադրությունը: Ուսուցիչը պիտի բացատրի, թե աշակերտները ինչպես պիտի արտագրեն նյութը: Երեխաները պիտի կրկնեն կանոնները, որոնց շուրջ տրվում է

[1] Տե՛ս Գյուլամիրյան Ձ., Գրավոր խոսք, «Անտարես» հրատ., Երևան, 2017թ էջ 288:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 297:

արտագրությունը: Վերջում աշակերտները պիտի ընթերցեն նյութը 2-3 անգամ, ապա նոր միայն անցնեն արտագրության:

Ստեղծագործական արտագրություններն իրականացվում են անցած ուղղագրական, լեզվական կանոնների կրկնության և ամրակայման նպատակով: Այս դեպքում արտագրությունն առավել զարգացնող է և հետաքրքիր. միօրինակ արտագրությունը կարող է ձանձրացնել, իսկ ստեղծագործական-որոնողական տարրեր պարունակող առաջադրանքը երեխան կկատարի հաճույքով և մեծ հետաքրքրությամբ: Այն կզարգացնի նրա մտածողությունը, հիշողությունն ու տրամաբանությունը:

Թե՛ ընդօրինակման և թե՛ ստեղծագործական արտագրությունների ժամանակ տարվող աշխատանքի մեթոդական շղթան հետևյալն է.

1. նախ՝ առաջադրանքի, ապա՝ բնագրի ընթերցում,
2. առաջադրանքի խնդիրների պարզաբանում և կատարման քայլերի որոշում,
3. առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ լեզվական նյութի կրկնություն,
4. ցուցումներ արտագրելու տեխնիկական կողմի վերաբերյալ,
5. բնագրի ընթերցում 1-2 աշակերտի կողմից,
6. մատները գրելուն նախապատրաստող վարժություններ,
7. արտագրություն,
8. ինքնաստուգում,
9. գրավորի հանձնարարում[3]:

[3] Տե՛ Գյուլամիրյան Ջ., Գրավոր խոսք, «Անտարես» հրատ., Երևան, 2017թ: էջ 298:

1.2 Թելադրություն գրելու առանձնահատկություններ

Թելադրություն: Թելադրությունը ևս հաճախ տրվող և ամենից շատ կիրառվող գործածական գրավոր աշխատանքներից մեկն է: Թելադրությունը լինում է երկու տեսակ՝ սովորական, որի մեջ մտնում են հնչյունային, նախազգուշական և ինքնաթելադրությունները, և ստեղծագործական, որի մեջ մտնում են ընտրովի, ազատ և հորինողական թելադրությունները[4]: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր դրսևորման առանձնահատկությունները, որոնք ազդում են դասի կառուցվածքի և բովանդակության վրա, սակայն ունեն նաև ընդհանրություններ, որոնք կրկնվում են գրեթե բոլոր դասերի ընթացքում կամ ընդհանուր են բոլոր դասերի համար:

Սովորական թելադրություններ անցկացնելու նպատակը երեխաներին թելադրված նյութն անսխալ գրի առնել սովորեցնելն է, որի միջոցով աշակերտների մեջ աստիճանաբար ձևավորվում է լսածը գրագետ գրի առնելու ունակություն: Դպրոցում կիրառելի է սովորական թելադրության 3 տեսակ՝հնչյունային, նախազգուշական և ինքնաթելադրություն[5]:

Հնչյունային թելադրությունն ուղղագրական այնպիսի վարժություն է, որի ժամանակ աշակերտները ուսուցման առաջին փուլում ուսուցչի օգնությամբ /բարձրաձայն/ , այնուհետև մտքում հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, ապա կատարում են համադրում, որը գրելու և կարդալու հիմքն է: Երեխաները թելադրություն գրելիս պետք է առաջնորդվեն վայելչագրական և ուղղագրական կանոններով:

Թելադրության համար առաջադրվում են նախ՝ բառեր՝ գրությամբ և արտասանությամբ չտարբերվող, ապա՝ բառակապակցություններ, հետո՝ պարզ ընդարձակ նախադասություններ, մտքով իրար հետ կապված նախադասություններ, բնագրեր:

Դասարանից դասարան թելադրության համար առաջադրվող նյութը բարդանում է: Թելադրության այս տեսակի արդյունավետությունը բարձր կլինի միայն մանրակրկիտ վերլուծական աշխատանք կատարելուց հետո:

Նախազգուշական թելադրությունների ժամանակ ուղղագրական մեկնաբանություններ են կատարվում մինչև թելադրություն գրելը: Նախազգուշական թելադրության հիմնական մեթոդական առանձնահատկությունը սխալների կանխումն է, որն իրականացվում է ուսուցողական-բացատրական ուղիներով: Շահեկան է նաև թելադրվելիք նյութը գրատախտակին գրելը (որպեսզի աշակերտները ոչ միայն լսեն

[4] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., Աշխատանք այբբենարանով, Երևան, «Լույս» հրատ., 1979, էջ 143-144:
[5] Տե՛ս Գյուլամիրյան Ջ., նշվ.աշխ., 2015, էջ 299:

տեքստը, այլև կարդան): Թելադրությունը գրելիս կարելի է գրատախտակը մաքրել կամ ծածկել վարագույրով:
Նախ առաջարկվում է նյութը լուռ կարդալ, ապա մի քանի աշակերտ կարդում են բարձրաձայն, այնուհետև իրականացվում է բացատրական աշխատանք, տրվում են մեկնաբանություններ: Երբ նյութն անհրաժեշտ չափով յուրացված է, պիտի ծածկել կամ մաքրել գրատախտակը և սկսել թելադրությունը:

Ինքնաթելադությունը նախազգուշական թելադրության մի տարբերակ է: Աշակերտը գրում է ոչ թե ուսուցչի, այլ իր թելադրությամբ: Ինքնաթելադրությունը զարգացնում է աշակերտների հիշողությունը, ուշադրությունը, կամքը, սովորեցնում է կառավարել սեփական մտքերը, գործողությունները, մշակում է հետևողականորեն աշխատելու ունակություն: Ինքնաթելադրության նյութեր կարելի է ընտրել ինչպես գրավոր նյութերի ժողովածուներից, այնպես էլ հայոց լեզվի դասագրքերից, որոնք նախատեսված են տնային նախապատրաստություն անցնելուց հետո դասարանում գրելու համար:

Ստեղծագործական թելադրությունները նախատեսված են 3-4-րդ դասարաններում: Ստեղծագործական թելադրությունների ժամանակ տրվող հանձնարարությունները երբեմն կարող են այն աստիճանի ձևափոխել թելադրվող նյութը, որ այն կարող է դառնալ պարզապես փոխադրություն, որի պատճառով էլ հաճախ գրավորի այս տեսակը ոմանք անվանում են ստեղծագործական: Ստեղծագործական թելադրությունները բազմազան են՝ ընտրովի, ազատ, հորինողական, առարկայական:

Ուսուցիչն ընտրում է որևէ տեքստ, կարդում դասարանում, բացատրում դժվար հասկանալի և անծանոթ բառերը, կատարում ուղղագրական, քերականական և բառակազմական վերլուծություններ ու վարժություններ, ցուցադրում ինչպես տպագիր, աշակերտների կազմած պլակատները, բառաղյուսակները, ապա յուրաքանչյուր նախադասություն թելադրում է մեկ անգամ կարդալով[6]:

Ընտրովի թելադրությունները նպաստում են սովորողների ուշադրության կենտրոնացմանը, հիշողության զարգացմանը, համադրելու, հակադրելու, ընդհանրացնելու կարողությունների ձևավորմանը: Ընտրովի թելադրության համար կարող են նյութ ծառայել որոշակի առաջադրանքով սովորական թելադրության բնագրերը: Օրինակ՝ թելադրված նյութիցգրի առնել միայն գոյական անունները, ածականները, որևէ ուղղագրական կանոնին վերաբերող բառերը, եզակի թվով գործածված բառերը, հատուկ անունները, թվականները, բայերը և այլն: Ընտրովի

[6] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., Գրավոր աշխատանքները հայոց լեզվից և գրականությունից, Երևան, «ՀԱՅՊԵՏՈՒՍՄԱՆԿ» հրատ., 1961, էջ 174-175:

թելադրությանը կից տրված առաջադրանքը պիտի անպայման գրվի գրատախտակին, իսկ ընտրված բնագիրը պետք է լինի փոքրածավալ: Բնագիրն ընտրելիս պետք է առաջնորդվել տվյալ դասարանի ծրագրով և տվյալ դասի նպատակով: Միևնույն թելադրության ժամանակ արդյունավետ է ընտրել և հանձնարարել լեզվական կամ տրամաբանական մեկ աշխատանքի ուղղություն, իսկ նյութը թելադրել արտահայտիչ և դանդաղ:

Ազատ թելադրությունը մի շարք հատկանիշներով նման է փոխադրությանը, հետևաբար մշակում է ոչ միայն ունկնդրածը գրագետ գրի առնելու կարողություն, այլև ձևավորում է ինքնուրույնաբար կապակցված խոսք շարադրելու ունակություն: Ազատ թելադրուության բնագիրը պետք է ունենա ոչ թե նկարագրական բնույթ, այլ պարունակի դեպքեր, ունենա հերոսներ և համեմատաբար ծավալուն լինի: Ազատ թելադրության ժամանակ բնագիրն ընթերցվում է մաս-մաս, իսկ աշակերտները գրի են առնում թելադրված միտքն «իրենց բառերով»: Սա յուրատեսակ նախապատրաստություն է փոխադրություն գրելուն:

Հորինողական թելադրություններն իրականացվում են ինչպես որոշակի թեմայով հենակետային բառերի հիման վրա տեքստը կազմելու և գրի առնելու, այնպես էլ առանձին «մտքերի թելադրման», այսինքն՝ ազատ թելադրության ուղիով: Գրավորների այս տեսակը 3-4-րդ դասարաններում հիմնականում գործադրվում և ներկայացնում է հենակետային բառերով գրվող խմբային փոխադրության և թելադրության տարրերի լիագումար: Հորինողական թելադրություն կարելի է գրել և՛ նախադասություն առ նախադասություն, և՛ պարբերություն առ պարբերություն, և՛ ամբողջական տեքստով: Աշխատանքը պետք է սկսել հենակետային բառերի ուղղագրության և իմաստների շուրջ տարվող բացատրություններից (երեխաների միջոցով), այնուհետև դրանցով պիտի կազմվեն մտքով իրար հետ կապված նախադասություններ, որոշվի, թե որ նախադասությունը որի տրամաբանական շարունակությունն է կազմում, ընտրվեն լավագույնները, ամբողջացվեն, հղկվեն, ապա նյութը պիտի պատմվի ամբողջությամբ: Ուսուցիչը պետք է գրի առնի համադասարանային աշխատանքի արդյունքով ստեղծված տեքստը և թելադրի:

Առարկայական թելադրության ժամանակ ցուցադրվում են առարկաները կամ դրանց նկարները, իսկ աշակերտները պիտի լուռ գրեն դրանց անունները: Թելադրության այս տեսակը ավելի շատ օգտագործվում է 2-րդ դասարանում՝ երեխաների մեջ ինքնաթելադրություն գրելու կարողության ձևավորման նպատակով: 3-4-րդ դասարաններում աստիճանաբար կարելի է տալ նաև լրացուցիչ հանձնարարություններ: Օրինակ՝ ա) առարկայի անունը գրել վանկատած, բ) գրել

առարկայի անունը համապատասխան հատկանիշ ցույց տվող բառերի հետ, գ) գրել առարկայի անունը՝ փոխելով թիվը և այլն:

Ստուգողական թելադրությունն իր հետապնդած նպատակով միանգամայն տարբերվում է ուսուցողական թելադրությունից: Ստուգողական թելադրությունը տրվում է պարզելու համար, թե աշակերտներն ինպես և ինչ խորությամբ են յուրացրել արդեն ուսուցված նյութը[7]: Ստուգողական թելադրության տեքստում առհասարակ լինում են այն բառերը, դարձվածքները, նախադասությունները և կետադրական նշանները, որոնք աշակերտները սովորել են նախորդ դասերին: Ստուգման նպատակով այդ ամենը գրելիս աշակերտները մեկ անգամ ևս վերհիշում են դրանց հետ կապված կանոնները և ամրապնդում իրենց հիշողության մեջ:

[7] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ 179:

ԳԼՈՒԽ 2
ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Շարադրություն.տեսակները և անցկացումը

Ստեղծագործական շարադրությունները կարևոր դեր են խաղում աշակերտների գրավոր խոսքի զարգացման, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման,խոսքի մշակույթի կատարելագործման գործում:

Դպրոցականներին օգնելու և կողմնորոշելու, նրանց ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար թեև հրատարակվել են շարադրությունների մի քանի ժողովածուներ, բայց արմատապես և կտրուկ չեն փոխում վիճակը.աշակերտները շարունակում են դժվարանալ :

Ամենից առաջ նշենք, որ ստեղծագործական շարադրություններն ըստ բնույթի լինում են երեք տեսակ՝ պատմողական, նկարագրական և դատողական:

Ամենահեշտը և տարածվածը **պատմողականն շարադրությունն** է, որի մեջ պատմվում է որևէ դեպքի, երևույթի մասին, որն ունենում է հաղորդման սկիզբ, զարգացում և ավարտ: Աշակերտը պետք է վարժվի անկաշկանդ գրելու իր հետ կատարվածի մասին, պարզ, մատչելի ու հստակ շարադրի իր տեսածն ու լսածը, զգացածն ու ապրածը :Այսպիսի շարադրություն գրելուն նախապատրաստվելու համար կարելի է լայնորոն օգտագործել ինչպես դասագրքերի, այնպես էլ արտադասարանական ընթերցանության նյութերի հնարավորությունները :Սովորողները նախ պետք է պատմեն, ապա նոր միայն փորձեն շարադրել՝ իրենց հեր կապված հերաքրքրական դեպքի մասին:

Նկարագրական շարադրությունն ունի այլ կառուցվածք. սկզբում հաղորդվում են նկարագրվող երևույթից կամ առարկայից ստացած տպավորությունները, ապա ցույց են տրվում դրանց ամենաբնորոշ ու էական հատկանիշները, իսկ վերջում տրվում է գնահատականը կամ եզրակացությունը: Նկարագրական շարադրություն գրելու համար աշակերտները պետք է ուշադիր ու մանրամասն դիտեն իրենց շրջապատը, առարկաներն ու երևույթները, նկատեն բնության փոփոխությունները: Այդ ամենը գեղեցիկ ու արտահայտիչ վերարտադրելու, նկարագրելու համար սովորողները պետք է օգտագործեն համապատասխան մակդիրներ, զանազան համեմատություններ ու փոխաբերություններ:

Նկարագրական-պատմողական շարադրության մի տեսակ է նկարի շուրջ տրվող աշխատանքը, որը մեծապես նպաստում է նկար կարդալու, արժևորելու նկարի մեջ

պատկերված երևույթները: Հետաքրքրական է նաև դիտած կինոնկարի վերաբերյալ շարադրություն գրելը, որը մեր դպրոցներում, ցավոք, լայն տարածում չի գտել:

Դատողական շարադրությունը կառուցվածքով տարբերվում է առաջիններից: Բաղկացած պետք է լինի հետևյալ մասերից՝ ընդհանուր վիճակը բացահայտող մաս՝ դրույթ, ապացույցներ պարունակող մաս և եզրակացություններ:Դատողական շարադրություն գրելը համեմետաբար դժվար է և տրվում է բարձր դասարաններում(օրինակ՝ հայրենասիրության, հերոսության, իսկական մարդ կոչվելու, ամենակարող լինելու, հացի պաշտամունքի և այլնի մասին):Այսպիսի շարադրություն գրողը պետք է փաստերով ապացուցի իր առաջ քաշած դրույթի ճշմարտացիությունը: Դատողական շարադրություն գրողը պետք է մտքում ունենա շարադրանքի պլանը, հստակ պատկերացնի նրա սկիզբը, ընթացքը և ավարտը , որոնք շարադրանքի կարևոր փուլերն են: Դատողական շարադրություններ կարելի է գրել սովորողների ձգտումների, երազանքների, մասնագիտության ընտրության, ինչպես նաև հայրենասիրության, հերոսության, աշխատասիրության, բարեկամության շուրջ:

Նախքան շարադրությունը ուսուցիչը պետք է նմանօրինակ շարադրություններ կարդա, ցույց տա նրբություններն ու պահանջները: Այդ բանին մեծապես կարող են օգնել նաև տրված սկիզբով կամ վերջով գրվող շարադրությունները: Օրինակ՝ ուսուցիչը կարող է տալ շարադրության սկիզբը և պահանջել, որ աշակերտներից յուրաքանչյուրը յուրովի շարունակի այդ միտքը:Այս աշխատանքը նման է ստեղծագործական փոխադրությանը:

Ցանկալի կլինի ,որ ուսուցիչը սկզբնական շրջանում շարադրություններ հանձնարարելիս նմանատիպ շարադրություն կարդա կամ հիշեցնի ,ծանոթացնի համապատասխան գրական ընթերցանության նյութերին:Այսպես,օրինակ,երբ հայտարարվեց <<Խաղաղություն ես ուզում ՝ պատրաստվիր պատերազմի >> խորագրով շարադրությունների մրցույթ,աշակերտներին հանձնարարվեց գտնել ասույթներ խաղաղության և պատերազմի մասին,ապա անցկացվեց քննարկում,թե ինչպես կարելի է պատերազմել,ինչ <<զենք>> կօգտագործեն,ինչը կփոխեն:Կատարված աշխատանքները տվեցին իրենց արդյունքը.մրցույթին ներկայացված շարադրությունը արժանացավ մրցանակի.

2.2 Շարադրություններ գրելու հիմնական առանձնահատկություններ

Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի

Թե հարցնեին՝ ինչ եմ ուզում
Ես ինձ համար ու աշխարհի,
Ես կասեի. <<Ես ինձ համար ու աշխարհի խաղաղություն եմ ուզում>>:

Ես խաղաղություն եմ ուզում: Ուզում եմ ապրել ու արարել, ուզում եմ արթնանալ արևի չարաճճի շողից, շնչել վաղորդայնի ծաղկաբույր օդը և հասկանալ, որ իրականացել են մեր մեծերի բերանից հնչող բարեմաղթանքները՝ թող աշխարհում խաղաղություն լինի, թող խաղաղ լինեն հողն ու մարդկանց սրտերը: Երազում եմ հոգու խաղաղության մասին, որ հանգիստ քուն կբերի մարդկանց աչքերին, արդար ու անկեղծ ժպիտ կդրոշմի նրանց շուրթերին...Երազում եմ ու պատրաստ եմ...

… Շաչում են արկերը, իրար են զարկվում զենքեր...

Ես կռվում եմ, պատերազմում , բայց կռվում եմ մարդկային կարծրացած հոգեբանության դեմ, կռվում եմ, որ մարդկանց մեջ <<իմ>> ու <<քոնը>> չլինի: Ես պատրաստ եմ արյան գնով ձեռք բերելու ազատություն: Ես ազատության մարտիկն եմ ու խաղաղության դեսպանը:

Պատերազմում եմ, որ պատերազմ չլինի: Պատերազմում եմ, որ խաղաղություն հաստատեմ:

Ես <<զենք>> եմ ուզում ստեղծել, նորօրյա մի զենք, որով պատերազմելիս արյուն չթափվի, չորբանա ոչ մի մանուկ, չլինեն որդեկորույս մայրեր: Այդ ժամանակ ես կհամոզվեմ, որ զենքը խաղաղություն է ընծայում, երջանկություն է բերում, ու մարդիկ ապրում են խաղաղ հարկի տակ:

Ուրեմն , առա՜ջ...

Ես խաղաղություն եմ ուզում...

Ես պատրաստ եմ պատերազմի...

Ես խաղաղության մարտիկ եմ հիմա ու պատրաստ եմ նորովի արարելու այդ <<խաղաղություն - զենքը>> ,որն ի վերուստ Արարչի կողմից տրված է ադամորդուն: Նրա անունն է <<ժպիտ>>, <<Ծիծաղ>> , <<Արև>> ու <<Բարև>>:

Ուրեմն, եկեք սեղմենք մեկմեկու ձեռք, ժպտանք ու ասենք՝ բարև՜...

Շարադրության մի տեսակն էլ ստեղծվում է տրված բառերով ու բառակապակցություններով: Ուսուցիչը նախօրոք թելադրում է տվյալ շարադրության նյութին առնչվող 12-15 բառ ու բառակապակցություն և պահանջում գրել շարադրություն:

Կա շարադրության տեսակ քերականական առաջադրանքով.ասենք՝գրել <<Ծիծեռնակաբերդի ճանապարհին>> վերնագրով շարադրություն՝ գործածելով դերբայական դարձվածներ:

Վերջերս շատ տարածված է ուղղագրական բառերի օգտագործմամբ ստեղծագործական շարադրությունը:Ասենք ,օրինակ, հանձնարարվում է գրել <<էքսկուրսիա>> վերնագրով շարադրություն՝օգտագործելով է-ե-ի ուղղագրությանը վերաբերող բառեր:

10-12-րդ դասարաններում կիրառելի է նաև նամակի ձևով գրվող շարադրությունը,ինչը հնարավորություն է տալիս աշակերտին ամփոփ ներկայացնելու,վերլուծելու գրողի ստեղծագործությունը,արտահայտելու սեփական հույզերն ու զգացմունքները/<<Նամակ Մեսրոպ Մաշտոցին>>,<<Նամակ Վահան Տերյանին>>/:

5-6-րդ դասարաններում կարելի է հանձնարարել շարադրություններ գրել մայրիկի,տատիկի,առաջին ուսուցչուհու ,տարվա եղանակների մասին,իսկ ավագ դպրոցի աշակերտներին՝ իրենց երազանքների, ապագայի, ընկերասիրության,հայրենասիրության վերաբերյալ իրենց պատկերացումների մասին:

Ստեղծագործական շարադրություն գրելու համար անհրաժեշտ է մտքում ընդհանուր գծերով ձևավորել ասելիքը՝ ուրվագծելով սկիզբը, հիմնամասը և ավարտը: Կարելի է նաև նշումներով համակարգել մտածածը: Այնուհետև դանդաղ, մտածելով ու պատկերացնելով շարադրվում է ասելիքը: Շարադրելուց որոշ ժամանակ անց պետք է ընթերցել գրվածը՝ արդեն խմբագրական մոտեցմամբ:Անհրաժեշտ է ուշադիր լինել, որ շարադրանքում չլինեն բառային անհարկի կրկնություններ կամ պարզապես ավելորդ բառեր, անհաջող ձևակերպումներ, ոչ ճիշտ բնորոշումներ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակային,պատճառահետևանքային կապերին, տրամաբանական համաչափ ընթացքին,որպեսզի շարադրանքում չլինեն անհամապատասխանություններ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև քերականական ժամանակների համապատասխանությանը, շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին, ուղղագրությանն ու կետադրությանը: Չափից դուրս երկար նախադասությունները պետք է կրճատել կամ վերջակետերով բաժանել իմաստային ինքնուրույնություն ունեցող հատվածների: Կարելի է որոնել ու գտնել թեմային համահունչ ստեղծագործություններ կամ թևավոր խոսքեր և մեջբերումներ կատարել, սակայն դա լավ շարադրություն գրելու պարտադիր պայման չէ: Հատկապես հարկ չկա մի քանի ծավալուն մեջբերումներ կատարելու տարբեր

բանաստեղծություններից, որոնք անընդհատ ընդմիջում են շարադրանքը և ընդգծում շարադրություն գրողի ասելիքի աղքատությունը: Կարելի է ընտրել մեկ դիպուկ բնաբան, որը կարող է լինել առած կամ ասացվածք, թևավոր խոսք, բանաստեղծության կամ արձակ ստեղծագործության տող: Եթե ժամանակ կա, շարադրություն գրողը պետք է իր գրածն ընթերցի գրելուց մի քանի օր հետո: Այդ դեպքում սեփական սխալները շուտ են նկատվում,միանգամից աչքի են զարնում այնպիսի թերություններ, որոնք շարադրելուց անմիջապես հետո կարդալիս զգալի չէին:

Շարադրության առանձին տեսակ է վերլուծական շարադրությունը:Վերլուծական շարադրությունները գրվում են որևէ գրողի ստեղծագործության կամ ստեղծագործությունների վերաբերյալ: Կարող են լինել նաև համեմատական բնույթի շարադրություններ, որոնցում զուգադրվում ու վերլուծվում են տարբեր գրողների (կամ միևնույն գրողի) այնպիսի ստեղծագործություններ, որոնք գաղափարական ընդհանրություններ ունեն (օրինակ՝ երկուսում էլ ներկայացված է հայրենիքի թեման): Ավելի հաճախ շարադրությունները նվիրված են լինում ոչ թե ամբողջ ստեղծագործության վերլուծությանը, այլ որևէ կոնկրետ հարցի քննությանը (օրինակ՝ գլխավոր կերպարի վերլուծությանը): Այսպես՝ հայ նշանավոր արձակագիր Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ կարող են գրվել վերլուծական տարբեր շարադրություններ՝ «Գևորգ Մարզպետունու կերպարը»,«Պատմականությունը Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում», «Մուրացանի աշխարհայացքի դրսևորումը «Գևորգ Մարզպետունի» վեպում» և այլն: Վերլուծական շարադրության նյութն առաջին հերթին գրական այն երկն է,որի վերաբերյալ պետք է գրվի շարադրությունը, սակայն անհրաժեշտ է նաև այլ նյութերի իմացություն: Շարադրություն գրողը պետք է ծանոթ լինի նաև տվյալ հեղինակի ուրիշ գործերի, պատկերացում ունենա այն ժամանակաշրջանի մասին,որի ընթացքում ապրել և ստեղծագործել է հեղինակը, իմանա գրական այն ուղղության առանձնահատկությունները, որի ներկայացուցիչն է հեղինակը(ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն):

Շարադրությունը չպետք է սկսել կաղապարված ներածականներով,որոնք տարածված ու ծամծմված են: Պետք է խուսափել ճոռոմ ու վերամբարձ բնորոշումներից, չափից շատ մակդիրների գործածումից, անհարկի ու կեղծ հուզականությունից: Պետք է խուսափել նաև ավելորդ բառեր գործածելուց: Անհրաժեշտ է վերլուծել, այլ ոչ թե վերապատմել ստեղծագործությունը:Մանավանդ չպետք է կատարել շատ և ծավալուն մեջբերումներ: Չափից շատ մեջբերումները սեփական ասելիքի բացակայության ապացույցն են: Նախադասությունները,

հատկապես բարդ նախադասությունները պետք է կազմել հետևողականորեն և սկսած միտքը հասցնել ավարտին:

Անհրաժեշտ է գործածել այնպիսի բառեր, որոնց իմաստները գիտեք.այլապես գրվածքը կարող է անիմաստ, նույնիսկ ծիծաղելի ստացվել: Կարևոր և պարտադիր է ուղղագրական ու կետադրական կանոնների իմացությունը: Թեկուզ գեղեցիկ շարադրված, բայց ուղղագրական և կետադրական սխալներով լի շարադրանքը լավ տպավորություն չի թողնի:

Շարադրությունները,ինչպես փոխադրությունները, ևս լինում են ուսուցողական/ընթացիկ/ և ստուգողական /թեմատիկ/:Շարադրությունը պիտի գրվի դասարանում՝ուսուցչի և աշակերտների համատեղ և մանրակրկիտ աշխատանքից հետո:Մտքերը գրավոր շարադրելը դժվար գործ է ,և սրան աշակերտին պիտի վարժեցնել:Միայն վերնագիր տալու և տանը գրելու հանձնարարությունը դրան չվարժված աշակերտին ստիպում է դիմել մեծահասակների օգնությանը,որն ավարտվում է նրանով,որ մեկ ուրիշն է գրում նրա փոխարեն:

Ուսուցողական շարադրությունը կարելի է գրել ըստ պլանի,ըստ տրված պարզ նախադասությունների ու բառերի,գրական երկից սովորած պատկերավոր արտահայտությունների:5-6- րդ դասարաններում ստուգողական բնույթի շարադրանքներ տալը նպատակահարմար չէ:

Եթե ուսուցիչը դասարանը նոր է ընդունել,և աշակերտները դեռ վարժված չեն իրենց մտքերը շարադրելուն,ապա աշակերտներին պետք է նախապատրաստել:Դրա լավագույն ձևը նախորդ դասաժամերին տրվող 3-5 րոպե տևողությամբ շարադրանքներն են,որոնք միավորային գնահատման չեն ենթարկվում:

Դժվարությամբ ընկալող սովորողին կարելի է առաջարկել,որ նախ մտովի պատկերացնի թեման այնպես,կարծես կինոնկար է դիտում,հետո նոր մտքում պատկերածը շարադրի բառերով:Կարելի է նաև թուղթ և գունավոր մատիտներ տալ և առաջարկել նկարել գլխում ծնված պատկերները,ապա նկարածը պատմել բառերով:

Ամենից դժվարը շարադրանքի սկիզբը գտնելն է :Օգնելու նպատակով կարելի է մի քանի աշակերտի կարդալ տալ իրենց գրածի սկիզբը,կամ էլ այդ աշակերտի հետ մի քիչ զրուցել,մինչև որ նա գտնի իր շարադրանքի առաջին նախադասությունը:

Եզրակացություն

Այսպիսով,շարադրություն և փոխադրություն գրելը աշակերտի համար կդառնա հետաքրքիր և ցանկալի,եթե նա հասկանա ,որ դրանք այնքան էլ բարդ աշխատանք չեն, և ինքը դա կարող է անել:Իսկ դա մեծապես կախված է ուսուցչի վարպետությունից,նրա՝ անընդհատ ստեղծագործելու և շարադրություն և փոխադրություն անցկացնելու նոր մեթոդներ գտնելու ձիրքից :Ճիշտ է,շարադրություն գրողը ինքը պետք է օժտված լինի ստեղծագործական կարողություններով,բայց ուսուցչի աշխատանքը ևս տալիս է ցանկալի արդյունք:Նպատակին հասնելու համար ուսուցիչը աշակերտի մեջ պիտի սերմանի հետևյալ գաղափարները.

1.Իսկական ոգեշնչումը ձեռք է բերվում գրելու միջոցով:

Գրի՛ր: Գրելու հենց միայն ֆիզիկական գործընթացն արդեն ազատություն կտա երևակայությանդ: Այս առումով գրելը պարելու նման է, երբ նրբագեղությունն առաջ է գալիս շարժումների հետ:

Գոնե սկզբնական շրջանում գրելը հեշտ է: Բառը բառի հետևից հոսում է... Ոգեշնչումը սովորաբար գալիս է նախադասության կեսից: Մուսադ կերգի, բայց միայն որպես հոսող թանաքի ուղեկից:

2. Սիրածդ գրողի գիրքը բաց վիճակում թող միշտ կողքիդ լինի ստեղծագործելիս՝ ոգեշնչման նպատակով: Մի վախեցիր այս գործում ինքդ քեզ կորցնելուց: Անկախ նրանից, թե մեկ ուրիշի արվեստը որքանով ազդեցիկ կլինի, քո անհատականությունը չի տուժի: Քո ձայնը կխառնվի այլոց ձայնին ու հետագայում ավելի հստակ կդառնա նրանց միջոցով: Բայց դու միշտ էլ կմնաս դու:

3.Սիրածդ գրականության հավաքածուն կազմիր:

Մի նոթատետր վերցրու, և մեջը քեզ դուր եկած գրքերից հետաքրքիր գրված հատվածներ, հաջող մտքեր գրիր: Դրանք կոգեշնչեն քեզ գրելու:

4.Սնվիր բառերով:

Մի լավ բացատրական բառարան ճարիր՝ հնարավորինս մեծ: Ապա հարմար գրքակալ պատրաստիր կամ գնիր, որն ամբողջ ժամանակ բառարանը բաց վիճակում կպահի: Այս գանձը դիր գրասեղանիդ վրա և հաճախ կարդա:

5. Տիրապետիր փոխաբերությանը:Բայց մի՜ չարաշահիր այն:

Նորություն չէ, որ փոխաբերությունը ոճական կարևորագույն հնարներից է, որ զարդարում ու հարստացնում է լեզուն, համ ու հոտ տալիս խոսքին: Բայց այն կիրառելն էլ համապատասխան հմտություն է պահանջում: Խուսափիր սարքովի

քնարական զարդարանքերից ու էժանագին, մակերեսային փոխաբերություններից: Բավական է գեղեցկացնելու նպատակով ավելորդ պաճուճազարդես խոսքդ, ու լրիվ հակառակ արդյունքի կհասնես:

6.Խուսափիր շաբլոն դարձվածքներից ու ծեծված արտահայտություններից: Նման արտահայտություններն արդեն այնքան են «մաշվել», որ գրեթե կորցրել են իրենց ուժը: Եթե ընթերցողը կարողանա կանխատեսել, թե ինչպես է ավարտվելու գրածդ արտահայտությունը, ուրեմն համարիր, որ կորած ես:

Պետք է հիշել, որ բոլոր գործերում հմտանում են շատ աշխատելով, ուստի շարադրություն և փոխադրություն գրելու մեջ էլ հմտանում են դրանք գրելով, այսինքն՝ ստեղծագործական ձիրքը զարգացնելով:

Աշակերտի գիտելիքներին մի փոքր կայծ տալու համար ուսուցիչը իր մեջ պետք է լույսի մի ամբողջ ծով կուտակի:

Վ. Սուխոմլինսկի

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Հայոց լեզու և գրականություն>> ամսագիր 3.2015
2. Գայանե Օհանյան <<Ստեղծագործական շարադրությունների ժողովածու>> Երևան-2005
3. Գյուլամիրյան Ջ., Գրավոր խոսք, «Անտարես» հրատ., Երևան, 2017թ
4. Լ. Եզեկյան,Ռ. Սաքապետոյան <<Հայոց լեզու -12>> Երևան -2011
5. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց Երևան-2007
6. Տեր-Գրիգորյան Ա., Աշխատանք այբբենարանով, Երևան, «Լույս» հրատ., 1979
7. Տեր-Գրիգորյան Ա., Գրավոր աշխատանքները հայոց լեզվից և գրականությունից, Երևան, «ՀԱՅՊԵՏՈՒՍՄԱՆԿ» հրատ., 1961
8. Փոխադրության նյութերի ժողովածու IV-X դասարանների համար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Օրվա դասի պլան

Առարկա	Հայ գրականություն
Դասարան	XII
Ուսուցիչ	Զարե Խաչատրյան
Թեմա	Հայաստանի քնարական կերպարը Համո Սահյանի ստեղծագործություններում
Դասի տևողությունը	45 րոպե
Ուսումնական նպատակը	Հայրենասիրության զարգացում, հայրենասիրական ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալում, պատկերային համակարգի առանձնահատկությունների ընկալում, ասմունքելու վարպետություն, իրար լսերու, կարծիք հարգելու անձնային որակների բացահայտում, իրար հարցեր ուղղելու, խոսքը ճիշտ կառուցելուունակություն, ստեղծագործական երևակայության բացահայտում և զարգացում:
Վերջնարդյունքներ	• Կձևավորվի հայրենասիրություն, • Կիմանա Համո Սահյանի ստեղծագործությունների բովանդակությունների էությունը, • Կկարողանա վերլուծել և վեր հանել բանաստեղծության հիմնական գաղափարը
Մեթոդներ	հնարներ, վարժություններ/- ԳՈՒՍ, խմբային աշխատանք,փակ և բաց հարցեր. Վենի դիագրամ, քառաբաժան, պրիզմա, <<Հեղինակի աթոռ>>
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն, արվեստ/ կերպարվեստ,երաժշտություն,

Դասի մուտքը	Բանաստեղծներն ունեն մի << արտոնություն>>. Որով տարբերվում են ուրիշ զբաղմունքի և ուրիշ ասպարեզի մարդկանցից:Բանաստեղծների մասին, որպես օրենք, դատում են միայն լավ ու հասունգործերի հիման վրա: Համո Սահյան….<<Որոտանի եզերքից>> հասավ մինչև 1998թ. Վերջին՝ <<Ինձ բացակա չդնեք>> ժողովածուն հեղինակի վերջին տարիներին գրած անտիպ բանաստեղծություններն են: Այս գրքով Սահյանը հանրագումարի է բերում անցած տարիները, համակերպվում կյանքի մայրամուտին մոտենալու տխուր փաստի հետ: Ճակատագրական 90-ականներին / արտագաղթ, հայաթափում, ցուրտ, սով/ անուշադրության կենտրոնում հայտնված, հուսահատված,հիվանդ ու հյուծված բանաստեղծը գերմարդկային լարումով ուժ է գտնում իր մեջ՝ օգնության ձեռք մեկնելու իր տառապյալ ժողովրդին: <<Ինձ բացակա չդնեք>> կարապի երգը հանդիսացող ժողովածուն դարձավ նրա անմահության առհավատչյան: XII դաս, աշակերտները Համո սահյանի ու նրա քնարերգության մասին գիտեն 7-րդ դասարանից /գրառված և պահված տետրերից կարդում են/: Ծանոթ են <<ժամանակակիցները Հ. Սահյանի ու նրա քնարերգության մասին>> Պազմիկ Դավոյանի, Լևոն Հախվերդյանի, Վահագն Դավթյանի, Մարտիրոս Սարյանի, Կայսին Կուլիևի, էդուարդ Մեժելայտիսի, Լև Օզերովի արտահայտած մտքերից: Ծրագրային ստեղծագործություններից գիտեն <<Անտառում>>, <<Մասրենի>>, <<Ախր ես ինչպես…>> բանաստեղծությունները, ինչպես նաև Սահյանի թևավոր խասքերից:

	Ծառը լաց է լինում, օգնություն է ուզում, թթվածին է ուզում: Ծաղիկը, ծառը չլինեն, մարդ կխելագարվի: Թվում է, թե իրենք հանգիցտ են: Դա խաբկանք է: Իրենք էլ են անհանգիստ: Ծառն ու ծաղիկն էլ իրենց ցավն ունեն: Մարդ իր կորցրած ազնվությունը բնությամբ կարող է գտնել: Մարդ պետք է ապչի ծառի օրենքով. Արմատով հողի խորքը ձգվի, սախարթով տարածվի դեպի արևը: Արմատը մեր հիշողությունն է, որ գնում է դեպի սկիզբը, դեպի պատմության խորքը, գնում է զորանալու… Եթե մեկը անցյալդ է ուզում գողանալ, վերագրել իրեն, ինչ ասել կուզի, պատրաստվում է զրկել քեզ ապագայից: Աշակերտներին նախապես հարձնարարվել էր կարդալ Հ. Սահյանի ժողովածուները և ձեռքի տակ ունենալ դասի ընթացքում:
Դասի ընթացքը	Խմբերի ստեղծումՀ Սաահյանի բանաստեղծությունների միջոցով: Աշակերտներին բոժոնում ենք առանձին թերթիկներ, որտեղ գրված են բանաստեղծությունների /խմբերի քանակով/ տողեր: Յուրաքանչյուրն ընտրում է մի թերթիկ, ուր որևէ բանաստեղծության մեկ տողն է: Բաժանելուց հետո առաջադրվում է շրջել դասարանով և գտնել նույն բանաստեղծության տողն ունեցողին: Այսպես միևնույն բանաստեղծության տողերով ձևավորվում են խմբեր: Ստեղծվում են հենակետային 4 խումբ՝ կախված աժակերտների քանակից: I Քառատող - I խումբ II Քառատող - II խումբ

	III Քապատող III խումբ IV Քառատող IV խումբ Խթանման փուլ: Աշակերտների ձեռքի տակ են Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուները: Խթանման փուլում կիրառում ենք <<Մտագրոհ>>-ի մեթոդը: Ընտրում ենք հիմնաբառը և դրա շուրջն աշակերտներն ասում են մտքում եղած առաջին բառը:
Գնահատում	Միավորային





Խթանման փուլում կիրառվում է նաև ԳՈՒՍ-ի մեթոդը

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Համո Սահյանի կենսագրությունը 7-րդ դասարանից անցել ենք Նշանավոր մարդկանց խոսքը նրա մասին/Ռազմիկ Դավոյան,Լ Հախվերդյան, ԿԿուլիեվ, էդ Մեժելայտիս, Վ Դավթյան, ՄՍարյան, Լև Օզերով Անցել ենք նաև Մասրենի, Ախր ես ինչպես Անտառում Սահյանի խսքերով երգեր են գրվել Տիգրան Մանսուրյան Մայրամուտի երգեր,,վոկալ շարքը	Ժողովածուների մասին նրա փիլիսոփայական մտքերից ինչ թեմաներով է ստեղծագործել Ով կամ ինչն է եղել նրա ոգեշնչման աղբյուրը	

Հավելված 2

Օրվա դասի պլան

Առարկա	Գրականություն
Դասարան	7-րդ
Ուսուցիչ	Զարե Խարատրյան
Թեմա	Վահան Թոթովենց: Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը
Նպատակ	1.Ձևավորել գիտելիքներ Թոթովենցի կենսագրության և ստեղծագործության մասին, 2. Պատկերացում տալ գրողի ապրած ժամանակաշրջանի և նրա մարդկային նկարագրի մասին
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1. Վերարտադրել գրողի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը, քարտեզագրել երկրային ուղին, (Հ1. վերլուծի և ընկալի գրական հայերեն տեքստեր) 2.Ուրվագծել գրողի կերպարը պատմական ժամանակաշրջանի համայնապատկերին, կատարել եզրահանգումներ, արտահայտել դիրքորոշում, (Հ29. վերլուծի ու ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ)
Խնդիրներ	1. Առանձնացնել գրողի կյանքի ուշագրավ փաստերը, քարտեզագրել, նրա պատմվածքների սցենարներով նկարահանված ֆիլմերից հատվածներ դիտել և քննարկել, 2. Մեկնաբանել պատմական ժամանակաշրջան- գրողի մարդկային նկարագիր փոխազդեցությունը,կանխատեսել գրողի ճակատագիրը այլ ժամանակաշրջանում, 3. Ստեղծել բանավոր կամ գրավոր երկխոսություն գրողի հետ նրա որևէ տարիքում, ընտրել համապատասխան մեղեդի:
Անդրադարձ	Բարոյական ի՞նչ դասեր քաղեցինք:
Տնային աշխատանք	Սահիկաշարի ստեղծում՝ կենսագրությունն ամփոփող և ֆիլմերի հատվածներով համեմված:
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, պատմություն, կինոարվեստ, երաժշտություն:
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Ժամանակ և տարածություն, անհատներ և հարաբերություններ, պատճառ և հետևանք, անհատական և մշակութային արժեհամակարգ:
Թեմա	Վ. Թոթովենցի <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>>վեպից հատված. բովանդակությունը և դիպաշարը
Նպատակ	1. Գաղափար տալ տեքստում պատկերված ինքնակենսագրական պատումի, կորուսյալ հայրենիքի, հուշի, հայրենի ավանդույթների մասին, ընդհանուր պատկերացում տալ դիպաշարի մասերի վերաբերյալ,

	2. Նպաստել հատվածները ստեղծագործաբար և պատկերավոր ներկայացնելուն, սեփական կենսագրական պատում ստեղծելուն
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1. Բացահայտել տեքստի գլխավոր գաղափարը, ներկայացնել դիպաշարի մասերը՝ ըստ տվյալ հատվածի, (Հ1. վերլուծի և ընկալի հայերեն գրական տեքստեր), 2. Հատվածները ներկայացնել տարբեր կերպարների անունից, ստեղծագործական հավելումներ անել, (Հ31. արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական դիրքորոշումը), 3. Ստեղծել սեփական ինքնակենսագրության պատառիկներ (տնային աշխատանք) (Հ42.դրսևորի ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություններ և հմտություններ),
Խնդիրներ	1.Ընդհանրություններ գտնել վերնագրի և բնագրի միջև, առանձնացնել հիմնական գաղափարն արտահայտող հատվածները և վերնագրել 2. Նշել դիպաշարի մասերի բնութագրիչ հատկանիշները, գտնել դրանք տվյալ հատվածում, 3.Բանավոր կամ գրավոր որևէ կերպարի (նաև անշունչ առարկայի) անունից ներկայացնել տվյալ հատվածը այլ վերջաբանով ՝ կատարելով նկարագարդումներ, հիշել համապատասխան երգ:
Անդրադարձ	Որտե՞ղ և ինչպե՞ս կկիրառենք սովորածը:
Տնային աշխատանք	Ստեղծել ինքնակենսագրական պատումի պատառիկներ:
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, կերպարվեստ, երաժշտութ- Յուն:
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարածություն, պատճառ և հետևանք:
Թեմա	**Վահան Թոթովենցի <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>> վեպի (հատվածի) կերպարները**
Նպատակ	1. Ձևավորել գիտելիքներ կերպարի վերլուծության, բնավորությունն ու վարքագիծը համեմատելու վերաբերյալ, 2. Պատկերացում տալ կերպարի վրա ապրած ժամանակաշրջանի ազդեցության մասին, նպաստել կերպարները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն
Վերջնարդյունք	Կարողանա՝ 1.Մատնանշել գրական կերպարի դերը, կերպարակերտման առանձնահատկությունները, (Հ7. գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ), 2.Բացատրել, թե ինչպիսին է ժամանակաշրջանի ազդեցությունը կերպարի վրա, ինքնուրույն ստեղծել

	կերպարներ, (Հ12. կիրառի տեքստային և գրաֆիկական խմբագրիչներ, կարողանա մշակել տվյալներ),
Խնդիրներ	1.Առանձնացնի կերպարների արտաքինը նկարագրող, բնավորության գծերը բացահայտող պատկերները, համեմատի իր հարազատների հետ, շեշտադրի ընդհանրությունները, 2.Հորինի կերպարների բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ կամ նկարի նրանց (տնային աշխատանք՝ առցանց գործիքով ստեղծել խաղ), 3. Տրված հատկանիշները համապատասխանեցնի կերպարներին, բացահայտի ժամանակաշրջանի ազդեցությունը, հիմնավորի օրինակներով:
Անդրադարձ	Ի՞նչը կփոխեի որևէ կերպարի վարքագծում: Ի՞նչը կփոխեմ իմ վարքագծում:
Միջառարկայական կապեր	Հայոց լեզու, թվային գրագիտություն, կերպարվեստ, հասարակագիտություն
Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ	Պատճառ և հետևանք, անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարա- ծություն: